

Հայաստանը ԱՊՅ երկրների առողջապահության բնագավառում համագործակցության Խորհրդի (Կենտրոնը՝ Մինսկ) անդամ է:

Երկրների միջև ստորագրվել են առողջապահության բնագավառի բազմաթիվ ուղղություններով փոխադարձ կապերն ապահովող ու հարաբերությունները կարգավորող բազմաթիվ որոշումներ:

Հայաստանը 1997թ. նոյեմբերին և 2001թ. ապրիլին Երևանում կազմակերպվեցին առողջապահության բնագավառում համագործակցության ԱՊՅ երկրների նիստեր:

Համագործակցության շրջանակները ներառում են.

- ԱՊՅ բուժական հաստատությունների ուղղակի համագործակցություն ,
- Կոնֆերանսներին փոխադարձ մասնակցություն,
- ՄԻՎ վարակի խնդիրների վերաբերյալ համաժողովների կազմակերպում,
- Յոդ-դիֆթերիա և հիվանդությունների կանխարգելում,
- Սննդամթերքի սանիտար-էպիդեմիոլոգիական վերահսկում,
- Եվրո-ասիական արտակարգ իրավիճակների բժշկական կենտրոնի ստեղծում Երևանում,
- Դեղագործական պրեպարատների վերահսկման և որակավորման համաձայնագրի ստորագրում,
- Արտակարգ իրավիճակների բժշկական մասնագետների վերապատրաստում,
- Համագործակցություն գիտական հաստատությունների միջև,
- Արտագարգ իրավիճակներում փոխադարձ օգնություն,
- Առողջապահական խնդիրների վերաբերյալ բժշկագիտական համատեղ կոնֆերանսների կազմակերպում,
- Միմյանց առողջարաններում հիվանդների բուժման հարցում համագործակցություն,
- Առողջապահական տեղեկությունների փոխանակում,
- Սանիտար-էպիդեմիոլոգիական ստանդարտների միջազգային կոմիտեի կազմակերպում,
- Փոխօգնություն փոխադարձ համաձայնությամբ ձեռք բերված այլ բնագավառներում: